ՆԱԽԱԳԻԾ 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- -------- 2010թ. N---- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 338 ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 995-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 8-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիայի մասին>> 338 որոշման 2-րդ կետում <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդին>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին>> բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 4-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու մասին>> 995-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիայի կանոնադրության /այսուհետ՝ Կանոնադրություն/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության 11-րդ կետում <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը /այսուհետ՝ լիազոր մարմին/>> բառերով;

2) Կանոնադրության հետագա դրույթներում, բացառությամբ 19-րդ կետի բ) ենթակետի, <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ>> բառերն

իրենց հոլովաձևերով փոխարինել <<լիազոր մարմին>> բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում <<Հայաստանի Հանրապետության կառավարման ակադեմիա>> պետական ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրության մեջ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ և ապահովել դրանց պետական գրանցումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 338 ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 995-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 8-ի N 338 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 338 ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N 995-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 8-ի N 338 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: